

Բ. ՄԱՍ

—«o»—

ԹՈՐՈՍ ՏԱՐՕՆԵՑԻ ԵՒ ԻՐ ՏԱՂԵՐԸ

Մեր տաղարաններուն եւ հին ձեռագիրներուն մէջ կան խումբ մը տաղեր որոնք միշտ կը վերջանան «գերի թորոս» կամ լոկ «թորոս» ստորագրութեամբ: Սակայն ինչպէս իր կարգին պիտի տեսնանք իր մէկ տաղը որ կսկսի:

Տէր արարիչ արարածոց . . .

Եւ հոս ներկայացուած է իբր է. տաղ Սաղէմի թիւ 3057-էն առնելով ուր այդ տաղը ունի «Տաղ ի թորոսէ Մշեցոյ ասացեալ» խորագիրը, մինչ Վիէննայի Մխիթարեանց թիւ 344 տաղարանին մէջ* (էջ 794), որ ըստ ցուցակագիր Հ. Տաշեանի ԺԶ կամ ԺԷ դարու ձեռագիր մըն է, նոյն տաղը ունի «Ի թորոսէ Տարոնեցոյ ասացեալ» խորագիրը, եւ երկու ձեռագիրներուն մէջ ալ տաղը կ'աւարտի

«Գերի թորոս մըսօք յիմար,

Մեղօք դարձեր ես կունահար . . . եւլն. (Անդ):

Գուցէ առարկուի թէ մինակ մէկ տաղի մը խորագիրը չի բաւեր «թորոս» կամ «գերի թորոս» ստորագրեալ տաղերը թորոս Տարօնեցիին ընծայելու: Եւ բարեբաղդաբար մենք վերի այդ փաստին կրնանք աւելցնել ուրիշ յարակից պարագաներ ալ ցոյց տարու որ «գերի թորոս» տաղասացը նոյն իսկ Տարօնեցին է:

Նախ սովորական երեւոյթ մըն էր մեր մօտ մեծանուն տաղասացներու ծաղկող կամ նկարող ըլլալն ալ: Օրինակ Մկրտ-